Արձանագրություն N 2

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2025/34Փ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

Մեկնարկ՝ «25» «սեպտեմբերի» 2025թ
ք. Երևան **Ժամը՝ 16:00**
Ավարտ՝ «16» «հոկտեմբերի» 2025թ
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ՝ *(ԳՊ/ԳԱՊ)*՝ Նորիկ Մնոյան

անդամներ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավախորհրդատու (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Լաուրա Գևորգյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Հրանտ Մինասյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Աստղիկ Խաչատրյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Էդգար Ֆրանգուլյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմակերպական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)՝ Անի Բաղալյան

1. Տեղեկատվություն՝ ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2025/34Փ ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 **1. ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2025/34Փ** ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են **2025 թվականի սեպտեմբերի 25-ին՝ ժամը 16:00-ին:**

2. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գները /գնվելիք ծառայությունների կատարման համար գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված.

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	Գնվելիք ծառայությունների կատարման համար գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/

1	S-8-79, /Մ-9/ - Խնածախ-Վաղատուր- /S-8-13/ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000 – կմ 21+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ	*2 047 500*

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և էլեկտրոնային հասցեների հրապարակում

3 .1 Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

N	Մասնակիցների անվանումները	Հասցե/ՀՎՀՀ/	էլ.փոստ
1	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 54բ /01508665/	ekspertizaproektov@mail.ru

4. Տեղեկատվություն՝ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

4.1 Մասնակցի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթում առկա էր անհամապատասխանություն, մասնավորապես հայտում բացակայում էր Հրավերով պահանջված փաստաթղթերի փաթեթում ներառված մասնագետի հավաստագիրը:

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ 14.10.2025թ. մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին ծանուցումը ստանալու օրվանից մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

16. 10.2025 թվականին, ժամը 11:00–ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

5. Տեղեկություն՝ ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2025/34Փ ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերում արձանագրված հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման մասին

5.1 Ընդունել ի գիտություն, որ մասնակցի կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել է հայտում առկա անհամապատասխանությունը:

6. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

6.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Չափաբաժին 1 S-8-79, /Մ-9/ - Խնածախ-Վաղատուր- /S-8-13/ տեղական նշանակության ավտոճանապարհի կմ 0+000 – կմ 21+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ

	Մասնակիցների անվանումները	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	1 700 000	340 000	2 040 000

6.2 Մասնակցի հայտի հաշվարկման ճշգրտությունը (տառերով, հայտում ներկայացված հայտերի համարներին արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկի թվաբանական ճշգրտությունը համապատասխանում է (ճիշտ է):

7. Տեղեկատվություն՝ կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

7.1 Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

8. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

8.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

9. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2025/34Փ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

9.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ընտրված մասնակից ճանաչել՝ «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ին:

9.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

9.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը՝ անգործության ժամկետ կիրառելի չէ:

9.4 Հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ **Նորիկ Մնոյան** .....

Հանձնաժողովի անդամներ՝ **Լաուրա Գևորգյան** .....

Հրանտ Մինասյան .....

Աստղիկ Խաչատրյան .....

Էդգար Ֆրանգուլյան .....

Քարտուղար՝ **Անի Բաղալյան** .....